

ՄԱԿԻ Հայաստանի գրասեննակը երէկ ցաւակցութիւն յայտնեց ՄԱԿի մարդկային իրաւանց գերագոյն յանձնա- կատարի գրասեննակին եւ ՄԱԿի քարտուղարութեան՝ Պաղտատի մէջ ՄԱԿի կեդրոնատեղիի ոմբահարման եւ իրաքի մէջ ՄԱԿի ընդհանուր քարտուղարի անձնակազմի ներկայացուցիչ Սերժիօ Վիերա Տէ Մելլոյի մահուան առնչութեամբ: Այս առիթով ՄԱԿի Հայաստանի ներկայացուցչութիւնը անցնող երկու օրերուն իր գրասեննակին մէջ ընդունած է ցաւակցական այցելութիւններ:

ՀԱՍՏԱ ԵՒ ԻՍԼԱՄԱԿԱՆ ԺԻՎԱՏ ՊԱՇՏՈՆԱՊԷՍ ԶԱՅՏԱՐԱՐԵՑԻՆ ԶԻՆԱԳՈՒՄԻ ԿՄԱՐՏԸ

ՇԱԿԱՌԱԿ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆՏԱՆԻՔԻ ԿՈՉԵՐՈՒՆ ԿԱՅՐԱԳՈՒԹԵԱՆ ԾԱԲԱԼՈՒՄԸ ԿԸ ՆԿԱՏՈՒԻ ՍՕՏԱԼՈՒՏ



Տապալակ հազարաւոր պաղեստինցիներ՝ Ապու Շահապի յուղարկարութեան

Վարչապետ Մահմուտ Ապպալաի հովանաւորած զինադուլին անկուժուած փախուցիկներու վարչապետը կը կորսնցնէ ամիսներէ ի վեր վայելած իր գիրքը՝ անկամ մը իւր սարձակները Նասէր Արաֆատի վրայ կեդրոնացնելով: Ուաշինկթըն, որ գրեթէ մէկ տարիէ ի վեր կ'անտե- սէր ու կը շրջանցէր Արա- ֆատի իշխանութիւնը, այս օր վերստին կը դիմէ անոր՝ պահանջելով անոր օժանդակութիւնը վերջ տալու համար արիւնահե- ղութեան: Արաֆատ, որուն հետ կապերը գրեթէ խզուած էին, այս շար- թուան մէջ հեռաձայնային հաղորդակցութիւններու- նեցաւ գերմանացի եւ եգիպտացի ղեկավարնե- րու հետ, ինչպէս նաեւ երէկ այցելութիւն մը ստացաւ եգիպտացի րարձ- րաստիճան պաշտօնատա- րի մը կողմէ:

ՄԱՍՆԱԿՅԵՅԷՔ «ԱԶԴԱԿ»Ի ՄՐՅԱՆՔԻՆ ԷԶ 3

ՀԱՅԿԱԿԱՆ ԾԽԱԽՈՏԸ ԱՃԽԱՐԱՆՈՂԱԿ ԵՒ ԻՐԱՅԱՏՈՒԿ ՖԻԼԹՐՈՎ ԼԻԲԱՆԱՆԻ ՄԷՋ

Cigaronne

ԿԸ ԿԱՃԱՌՈՒԻ ԲՈԼՈՐ ԿԱՃԱՌԱՏՈՒՆԵՐՈՒ ՄԷՋ

«CIGARONNE» FILTER - HOLDER CIGARETTE

وزارة الصحة تحذر: التدخين يؤدي إلى أمراض خطيرة ومميتة مستوردة وموزعة مباشرة من قبل إدارة حصر التبغ والتبناك اللبنانية

ՍԱՆՐԱՍՏԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ ԴԻՍԵԼ SAHALCO ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԵՑՈ. 04 - 712409, 03 - 201957 ԵՒ 03 - 201967 ԹԻԲԵՐՈՒՆ

ՊԱՂՏԱՏԻ ՄԱԿԻ ԿԵԴՐՈՆԻՆ ՌՄԲԱՀԱՐՈՂՆԵՐՈՒՆ ՕԺԱՆԴԱԿԱԾ ԿՐՆԱՆ ԸԼԼԱՆ ԻՐԱՔՅԻ ՊԱՀԱԿՆԵՐ



Պաղտատի ՄԱԿի նստավայրին ապահովութեան պա- տասխանատուութեան մասին ծայր տուած վէճը թափ ստացաւ երէկ, երբ լուրեր հրապարակուեցան, թէ ՄԱԿ մերժած է ամերիկացիներուն առաջարկած օժանդակ- ւթիւնը՝ ՄԱԿի կեդրոնատեղիին եւ անձնակազմին ապահովութեան առնչուող:

Լուրը կը հրապարակուէր այն պահուն, երբ թէ՛ ՄԱԿ, թէ՛ ամերիկացի պաշտօնատարներ կը հաստատէին, որ կեդրոնը ուժեղացողները «ներսէն» օգնութիւն ստա- ցած են եւ մեղսակիցներ ունեցած: Ենթադրեալ մեղսա- կիցները շէնքին իրաքցի պահակները կը նկատուին:

Եւրոպացի դիւանագէտ մը յայտնեց, որ ամերիկա- ցիները գիտէին, թէ ՄԱԿի դէմ սպառնալիք մը կայ, որուն համար առաջարկած են ամրապնդել կեդրոնին ապահովութիւնը՝ զինուորներ գետնէլքով, սակայն ՄԱ- Կի պաշտօնատար մը մերժած է առաջարկը: Դիւանա- գէտը աւելցուց, որ ՄԱԿի զլխաւոր պատուիրակ Սերժիօ Վիերա տէ Մելլո տեղեակ չէ պահուած առաջարկին ու անոր մերժումին:

ՄԱԿ ցարդ մերժած է հաստատել ինչեւ լո տեղեկու- թիւնները: Ընդհանուր քարտուղար Քոֆի Անան ըն- ցունած էր, որ ամէն կողմերէ սխալներ գործուած ու թերութիւններ արձանագրուած են, բայց եւայլուս ան առաւելաբար պատասխանատու նկատած էր դաշնա- կից ուժերը, որոնք չէին յաջողած անհրաժեշտ ապահո- վութիւնը հաստատել Պաղտատի ու այլ շրջաններու մէջ: Սակայն ՄԱԿի պաշտօնատարները անկամ կ'ըն- դունին, որ նստավայրին պայթուածի գործողութիւնը ունեցած է օժանդակ ձեռքեր, որոնք իրաքցի պահակ- ներ են եւ, որոնք հաւանաբար անհրաժեշտ տեղեկու- թիւնները փոխանցած են, յատկապէս Տէ Մելլոյի շար- ժումներուն եւ գրասեննակին ղիրքին մասին, որովհե- տեւ յստակ է, թէ գործողութեան թիրախը Տէ Մելլոն էր:

Երեքշաբթի օրուան գործողութեան պատասխանա- տուութիւնը ստանձնեց «Մոհամէտի երկրորդ բանա- կին Ջինեալ Պահակները» շարժումը, որուն անունը առաջին անգամ ըլլալով կը լսուի: Տէ Մելլոյի մարմինը երէկ Պաղտատէն ժրնեւ փոխադրուեցաւ, ապա՝ պիտի փոխադրուի Ֆրանսա, ուր պիտի թաղուի՝ ընտանիքին փախաբիւն հիման վրայ:

Մինչ այդ, ՄԱԿ սկսած է կրճատել իրաքի մէջ գոր- շարքը՝ էջ 10

ԵՒՐՈՊԱՅԻ ԴԵՏԵՐԸ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ԿՈՒՆԵՆԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵԿԱԿԱՐՈՒԹԵԱՆ ՀԵՏ

Եւրոպական խորհուրդի խորհրդարանական վեհա- ժողովի դիտարկման յանձնարումը պատուիրակու- թիւնը, որ Հայաստան կ'այցելէ ստուգելու համար Եւ- րոպական խորհուրդին հանդէպ Հայաստանի ստանձ- նած պարտաւորութիւններու կատարման ընթացքը, երէկ Երեւանի մէջ շարունակեց իր հանդիպումները: Պատուիրակութեան անդամները՝ Եփրեմակերիմ (Լե- հաստան), Ռոնէ Անտրէ (Ֆրանսա) եւ քարտուղար Վա- լերի Կլամէր երէկ տեսակցութիւն ունեցան Հայաստա- նի վարչապետ Անդրանիկ Մարգարեանի հետ:

Եւրոպացի դէտերը վարչապետ Մարգարեանէն լու- սարանութիւններ խնդրեցին պետական մարմիններու կողմէ կրօնի եւ ազգային փոքրամասնութիւններու հարցերու համակարգման, պետութեան կողմէ վերջերս յատկացուող դրամական օժանդակութեան բաշխման ընթացակարգին, կրօնական կազմակերպութիւններու գրանցման, ընտրութիւններու կազմակերպման եւ կա- յացման ընթացքին ծագած խնդիրներու, անոնց հան- դէպ ընդդիմութեան տեսակէտներուն, բանակին նկատ- մամբ քաղաքացիական վերահսկողութեան իրականաց- ման եւ այլ հարցերու առնչութեամբ: Պատասխանելով

Շարք՝ էջ 2

ԿՈՒՆԵՆԱՆ ԿԸ ՍՊԱՌՆԱՅ

Ազգայնական «Զեքթալ» թերթը յայտնեց, թէ Ազգայնական արտաքին գործոց նախարար Վիլայէթ Կուլիբե յայտարարած է, թէ անոնք, որոնք Լեռնային Ղարաբաղ կ'այցելեն առանց Ազգայնական իշխանու- թիւններուն հաւանութեան, պէտք չէ արտօնութիւն ստանան Ազգայնական այցելելու: «Ազգայնական այս օրէն- քը պէտք է կիրարկէ: Ուեւ օտար քաղաքացի՝ քոնկրէ- սական, մամոյն ներկայացուցիչ թէ քաղաքական դէմք,

Շարք՝ էջ 2

ԱԿՆԱՐԿ ԳԱՐՉԵԱԼ ԱՊԱՏԵԼԵԿԱՏՈՒԹԻՒՆ

Արդէն քանի երրորդ անգամ ըլլալով ապրիլյանական պետական քարոզչամեքե- նան կը փորձէ յերկրաւորներով Հայաստա- նի դէմ հանրային կարծիքը ապակողմնորո- շել: Անգամ մը եւս շեշտը կը դրուի հայերու նախայարձակ ըլլալուն եւ իրադարձութիւն խախտած ըլլալու հէքիաթային քարոզարշա- ւին վրայ: Բայց այս անգամ ապատեղեկա- տուական խուսախուռներուն ընթացքին փորձ կը կատարուի ներքաշելու ԵԱՀԿի շրջանակները եւս:

Ըստ ապրիլյանական «Լիտրը» հեռատե- սիլի կայանին ԵԱՀԿ գործող նախագահը հայկական կողմէն բացատրութիւն պահան- ջած է դիտարկումներու ընթացքին հայ վի- նուորներու կողմէ բացուած հրաձգութեան մասին:

Ապրիլյանական քարոզչամեքենային արտադրած ապատեղեկատուական այս տարբերակը, իր ենթաբաժիններու ամբող- ջութեամբ հանգամանօրէն հերքուեցաւ Հա- յաստանի արտաքին գործոց նախարարու- թեան կողմէ, համապատասխան փաստերով: Բայց, մինչեւ թէկուզ համապիչ հերքում՝ մի- ջազգային լրատուադաշտը արծարծեց ար- դէն սահմանային բախումին մասին Ազր- պէյճանի մեկնաբանական լրատուութիւնը:

Ճիշդ է, որ թէ՛ հարցին ներքաշում ԵԱՀԿի շրջանակները եւ թէ՛ առ հասարակ հայ- պարպէյճանական հակամարտութեան թղթածրարով շահագրգռուած քաղաքական կողմերը ի վերջոյ կը հաստատեն իրականու- թիւնը եւ կը գիտակցին հարցին ներքաղա- քական շահարկումներուն իրականութեան, սակայն հասարակական կարծիքին առ- նուպան որոշ մէկ խաւը թերեւս կը տարուի ապրիլյանական կոյր ապատեղեկատուութեան արշաւը: Ապատեղեկատուութիւնը արդէն քարոզ- չական քաղաքականութեան կայացած մշա- կոյթ է Ապրիլյանի համար: Այս իրականու- թեան դիմաց հասանաբար անհրաժեշտ է ոչ միայն ապատեղեկատուութեան արագ կշռոյթով եւ համապատասխան փաստարկ- ներով հակադրելու միջոցներու որդեգրումը, այլ նաեւ ապատեղեկատուութեան ազդեցի- կութիւնը կանխելու եւ առ այդ շահէիք են- թահողը չեզոքացնելու քարոզչական ռազ- մավարութեան մը մշակումը. մասնաւոր, որ թէ՛ շրջանային եւ թէ՛ ներապրիլյանական դէպքերու հոլովոյթը մտածել կու տայ, որ Ապրիլյան պիտի սաստկացնէ ապատեղե- կատուութեան պետական քարոզարշաւը:

«Ա»

ՍԵՄԱՀԱ ԸՆԴՈՒՆԵՑ ՄԱԿԻ ՏԵՂԵԿԱՏՈՒԱԿԱՆ ԿԵԴՐՈՆԻ ԼԻԲԵՐԱՆԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ

Տեղեկատուութեան նախարար Միշել Սրմազա երէկ ընդունեց Լիբանանի մէջ ՄԱԿի տեղեկատուական կեդրոնի տնօրէն Նաժիպ Ֆրէյժին, որուն հետ քննարկեց Իրաքի մէջ ՄԱԿի կեդրոնատեղիի ուժեղացումը միջազգայնապէս:

Սրմազա շնորհակալութիւն յայտնեց ՄԱԿի և, որ կրնայ Իրաքը վերադարձնել իր օրինական կարգավիճակին, ինչպէս նաև կրնայ Իրաքի գերիշխանութիւն պարզեւել, վերջ տալով Իրաքի իշխող օտար ուժերու գոյութեան: Սրմազա անցնելով, որ նշեալ առաքելութիւնը կը վերաբերի նաև սուրիական և լիբանանեան հողերէն օտար ուժերու հեռացման տարեբարկին:

Սրմազա անցնելով, որ նշեալ ուժերու հեռացումը միակ ճամբան է, որ կ'օժանդակէ շրջանին մէջ արդար եւ ամբողջական խաղաղութեան հաստատման:

Սրմազա կողմնակից արարական տեղեկատուութեան աշխարհին գրկաբաց ընդունելու Իրաքի մէջ նշանակուելիք ՄԱԿի ընդհանուր քարտուղարի նոր ներկայացուցիչը:

Իր կարգին, հանդիպումէն ետք Ֆրէյժի ըսաւ, որ չնորհակալութիւն յայտնած է Սրմազային՝ Իրաքի մէջ ՄԱԿի կեդրոնատեղիին ուժեղացումին առնչութեամբ Լիբանանի ցուցաբերած կեցուածքին եւ լիբանանցի պետական թէ բարձրաստիճան պաշտօնատարներու կողմէ կատարուած դատապարտումներու արժեքին համար:

ԵԱԶՊԷՔ ԿԸ ՔՆՆԱԴՍԵ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Լիբանանի մէջ Իրանի հոգեւոր պետ ալայթոլլա իմամնէնի ներկայացուցիչ շէյխ Մոհամէտ Եազպէք երէկ քննադատեց կառավարութեան որդեգրած քաղաքական եւ տնտեսական քաղաքականութիւնը, դիտել տալով, որ Լիբանան հարուստ է իր նիւթական գումարներով եւ եթէ ճիշդ ձեւով օգտագործէ զանոնք, ապա հաստատութիւններու եւ ծրագրերու ընդմէջէն կարելի կ'ըլլայ Լիբանանի քաղաքացիները նուազ ծանրաբեռնել սուրբերով:

Պաալայթի մէջ Ուրբաթ օրուան իր քարոզին ընթացքին շէյխ Եազպէք անդրադարձաւ իսրայէլեան օդուժին կողմէ լիբանանեան օդային սահմաններու խախտումին, զանոնք նկատելով ոճիրներ հարկւր հազարաւոր քաղաքացիներուն դէմ: Շէյխ Եազպէք գարմանք յայտնեց, թէ աշխարհ ինչպէս լիբանանցիներէն կը պահանջէ լուր մնալ եւ չդատապարտել նման խախտումներ:

Շէյխ Եազպէք խոստի դատապարտեց նաև Համասի ղեկավարներին Իսմայիլ Ապու Շանայի սպանութիւնը եւ շնչուց, որ դիմադրութիւնը երբեք կ'անգ պիտի չառնէ որքան ալ արևին հոսի, իսկ ամբողջական ազատագրումը անպայման օր մը իրականութիւն պիտի դառնայ:

ԿՈՒԼԻԵՒ ԿԸ...

Երբ Լեռնային Ղարաբաղ այցելէ առանց Պաքոյի հաւանութեան, պէտք է անոր արտօնութիւն շնորհուի Ազրպէյճան այցելելու, ընդգծած է Կուլիեւ:

Կուլիեւ այս յայտարարութիւնները կ'ընէ ամերիկեան Քոնկրէսի անդամներու խումբի մը վերջերս Լեռնային Ղարաբաղ կատարած այցելութեան լոյսին տակ:

ԿՈՒՉՈՒԻ

● Ամերիկեան եր ջոնտիզմը ընկերութիւն մը (Արեւմտեան Պէյրութ) կարիքը ունի փորձառու թերմիսիներու, հմուտ տեղադրող եւ նորոգող (Central air-conditioning): Դիմել հեռ. 01 - 363181 կամ 03 - 800601:

«ՎԱՆԱՅ ՉԱՅՆ»Ի ՎԱՂՈՒԿԱՆ ԶԱՅՏԱԳԻՐՆԵՐԸ

8:30.- Լիբանանեան մամուլի խորագիրներու ընթերցում՝ արաբերէն
8:45.- «Աստղեր»
9:40.- «Առաւօտեան տոն»
11:30.- Լիբանանեան մամուլի խորագիրներու ընթերցում՝ հայերէն
3:00.- «Տաղկատու»
3:00.- «Մանկապատանեկան յայտագիր» ուղղակի ձայնասփռում
8:30.- Լիբանանեան մամուլի խորագիրներու ընթերցում՝ արաբերէն
9:30.- Քաղաքական լուրեր/ հայերէն
9:40.- «Առաւօտեան տոն»
10:00.- Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարի Ս. պատարագի ուղղակի ձայնասփռում
12:30.- Քաղաքական լուրեր/ հայերէն
1:00.- Ազգային - յեղափոխական երգեր
2:30.- Քաղաքական լուրեր/ արաբերէն
2:45.- Յոնաբեր երգերու ունկնդրութիւն
4:30.- Քաղաքական լուրեր/ արաբերէն
6:00.- «Քաղաքական հորիզոն» ընթացիկ շաբթուան քաղաքական զարգացումներու ներկայացում՝ վերլուծական մտայնումով
6:30.- Քաղաքական լուրեր/ հայերէն

Orient plus
Touch New Worlds
Jarna
\$319
8 days - Direct Charter Flight Every Tuesday starting from 8 July
Other Destinations: Boat Trip to Cyprus & Greece \$190 \$425
BOOK THIS WEEK AND GET 15% DISCOUNT ASK FOR OUR FREE CREDIT FACILITIES
01.900598, 901598
03.258336, 256254
www.orientplus.com

ՆԱԽԱԳԱԸ ԼԱՇՈՒՏ ԸՆԴՈՒՆԵՑ ՔԱՊԱԼԱՆ ԻՍԱ ԽՈՒՐԻՆ

Նախագահ զօր. Էմիլ Լահուտ երէկ շնչուց, որ կը հակէ Լիբանանը օրէնք եւ հաստատութեան կանոն պետութեան վերածելու իր երդման գործադրութեան, հակառակ բոլոր դժուարութիւններուն, որոնք կը խոչընդոտեն անոր գործադրութիւնը:

Նախագահ Լահուտ ընդգծեց նաև, որ ինք կը հաւատայ իր կատարած երդման:

Նախագահ Լահուտ երէկ Պաալայթի մէջ ընդունեց Երեսփոխան Քապալան Իսա խոսքին:

Իր կարգին, խոսքի շնչուց, որ երկրին մէջ հարկէ ստեղծել միասնականութիւն մը՝ իշխանութեան տարբերուն միջեւ: Ան ըսաւ, որ միասնականութիւնը հիմնական պայման է պետութեան եւ պետական հաստատութեան կայունութեան, դիտել տալով, որ շրջանային պայմանները «գազալու» են եւ դիւրաբեկ, իսկ նման պարագայի ընթացքին ներքին անհանգստանքները եւ հարց կրնայ ժխտական ազդեցութիւն ունենալ շրջանային կայունութեան վրայ:

խոսքի, որ նախագահ Լահուտի հետ քննարկեց երկրի տնտեսական տագնապը եւ ինձորի արտադրութեան սպառումին առնչուած հարցեր, յայտնեց, թէ նախագահ Լահուտ կ'աշխատի ամբարշտելու լիբանանեան տնտեսութիւնը եւ զարգացնելու երկրագործութեան մարզը:

Նախագահ Լահուտ հետեւեցաւ նաև երկրականութեան ընկերութեան ձեռնարկած արշաւին, որ նպատակադրած է «մարդաբարձր» երկրական տնտեսութեան ցանցին մէջ գործադրուող ապօրինութիւններու խախտումները՝ ամբողջ Լիբանանի տարածքին:

Միւս կողմէ, նախագահ Լահուտ երէկ ստացաւ նախագահ Լիբանանի Սալէհին: Նախագահ Սալէհ իր նախնական անդրադարձած էր Լիբանան-Եմէն երկկողմանի յարաբերութեանց ամբարշտման, շրջանային իրադարձութիւններուն եւ արաբական միացեալ կեցուածքի մը որդեգրման անհրաժեշտութեան:

Նախագահ Լահուտի այցելեց հաղորդակցութեան միջոցներու նախա-



րար ժան Լուի Քրոտահի: Քննարկումի առարկայ դարձան նախարարութեան աշխատանքները, յատկապէս ընդունուած քաղաքացիական պետութեան վերածելու նախարարելիք հարցերը:

Նախագահ Լահուտ այցելեց նաև լիբանանեան պարագիլեան հաստատութիւններու եւ միւրտալով, որ շրջանային պայմանները «գազալու» են եւ դիւրաբեկ, իսկ նման պարագայի ընթացքին ներքին անհանգստանքները եւ հարց կրնայ ժխտական ազդեցութիւն ունենալ շրջանային կայունութեան վրայ:

ՕՂԱԿԱՅԱՆԻՆ ՍԵՋ...

Նախագահ Լահուտ երէկ ներկայ գտնուեցաւ Պէյրութի Միջազգային Օղակայանին մէջ տեղի ու-

նեցած պատանդներու ազատութեան բեմադրութեան նախադրութիւն, որ կատարուեցաւ ներքին գործոց եւ քաղաքացիական պետութեան նախարարելիք հարցերու նախարարելիք Սրբի հովանաւորութեամբ:

Նախագահ Լահուտ շնչուց, որ ապահովութեան ուժերուն կազմ ու պատրաստ վիճակը կ'ամրապնդէ հայրենիքին հանդէպ լիբանանցի քաղաքացիներուն վստահութիւնը, ինչպէս նաև վստահութիւնը վերջին օտար երկիրներուն, որոնք արդէն իսկ համոզուած են, թէ ապահովական կայունութիւնը Լիբանանի մէջ տիրական դարձած է:

Սրբի կարգին յայտնեց, թէ ներքին ապահովութեան ուժերը պատրաստ են ճշդուել եւ դիմադրելու ահաբեկչական Օղակայանին մէջ տեղի ու-

ԵՐՈՊԱՅԻ ԴԵՏԵՐԸ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ԿՈՒՆԵՆԱՆ...

Շարունակուած Ա. Էջէն

Եւ լուսաբանութիւններ տալով դէտեքուրն հետաքրքրող հարցերուն շուրջ, վարչապետ Մարգարեան հաստատեց, որ եւրոպական ընտանիքին մաս կ'ապմելու ուղի ուղղեցաւ ըլլալով, Հայաստան պատրաստ է շարունակելու քննարկումները՝ առկա խնդիրներու լուծման համար:

Դէտեքուրն պատուիրակութիւնը երէկ նաև հանդիպում ունեցաւ Հայաստանի արտաքին գործոց նախարար Վարդան Օսկանեանի հետ: Քննարկուեցան Եւրոպական Խորհուրդի հանդէպ Հայաստանի ստանձնած պարտաւորութիւններու կատարման ժամկետներուն, եւրոպական կառույցներու Հայաստանի համարկան, դրացի երկիրներու հետ Հայաստանի յարաբերութիւններուն առնչուող խնդիրներ, ինչպէս նաև Լեռնային Ղարաբաղի տագնապի լուծման գործընթացի իրավիճակը՝ Արաբիանի ներքաղաքական հաւանական վարգացումներուն լոյսին տակ:

ԿՈՒՉՈՒԻՆ

● Կարպետ ոսկերիչ (սետեքը) գործաւորներ: Դիմել հեռ. 01-242549:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԼԻԲԱՆԱՆԻ ԵՐԶԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ
ՃԱՇԿԵՐՈՅԹ
ԳԵՂԱՐՈՒԵՏՏԱԿԱՆ ՃՈՒՆ ԶԱՅՏԱԳԻՐ
Տեղի կ'ունենայ Կիրակի, 31 Օգոստոս 2003, կէսօրէ ետք ժամը 1:00Լճ սկսեալ, «Այ Ուսորում» ճաշարանին մէջ, Ռէյ.Ֆուն:

Կրթական նախկին նախարար ԱԳՏԸԼ ՌԱՀԻՄ ՄՐԱՏԻ վկայութիւնը
ՓՕԼԻԿԼՈԹ ԲՈԼԷՃԻ
30-ամեակին առթիւ
«...Լիբանանի մէջ թեքնիք ուսման ճամբուն վրայ մեծ է ՓՕԼԻԿԼՈԹ ԲՈԼԷՃԻ ներդրումը: Այս գոյճի արձանագրած յաջողութիւնը ինքնին աղաղակող փաստ է, թէ ՓՕԼԻԿԼՈԹ ԲՈԼԷՃԻ 30 տարուայ ընթացքին յաջողած է իր առաքելութեան մէջ եւ շահած նախարարութեան ամբողջական վստահութիւնը: 30ամեակին առթիւ, որպէս կրթական նախարար կը շնորհաւորեմ շրջանաւարտները եւ քոյճի հիմնադիր-տնօրէն պրն. Պետրոս Շեմալեանը...»:
Խօսուած՝ Ուրբաթ, 12 Յուլիս, 2002, վկայականաց բաշխման հանդէպի ընթացքին

ՀԱՆՐԻ ՀԸԼՈՒ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿԵ ԻՐ ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՇԱՐՔԸ

Պաալայթ-Ալէյ Երեսփոխանական մասնակի ընտրութիւններու թեկնածու Հանրի Հըլու երէկ այցելեց Լիբանանեան Ազգային Ճակատ կուսակցութեան կեդրոնատեղին, ուր հանդիպում ունեցաւ կուսակցութեան նախագահ Էրնէսթ Քարամի հետ:

Հանդիպումի աւարտին Հըլու յայտնեց, որ ընտրութիւններուն եւ թեկնածուներու զօրակցութեան առնչուելիք կուսակցութիւնը այսօր պիտի հրապարակէ հաղորդագրութիւն մը:

Հըլու այցելեց նաև յոյս ուղղափառ համայնքի Պէյրութի արտաքին գործընթացի իրաւ Աուտէ Եպիսկոպոսին եւ անոր շնորհակալութիւն յայտնեց նախկին երեսփոխան, հանգուցեալ Փիեռ Հըլուի (իր հօր) յուղարկուած թանկարժեք թանկարժեքներու ներկայութեան համար:

Հըլու Աուտէ Եպիսկոպոսին հետ քննարկեց ներքին անհանգստանքները յուզող հարցեր:

ՔԱՆԻ ՍԸ ՏՈՂՈՎ

● ՀԱՆՐՈԳՈՒՅՑ Զինութեանց եւ փոխադրութեան հարցերու նախարար Նեժիպ Միքաթի երէկ յայտնեց, որ Լիբանանի մէջ բարեկարգութեան յաջողութիւնը կը կեդրոնանայ անոնց կիրարկման ձեւին եւ միջոցներուն մէջ: Ան ըսաւ, որ փտածութեան թղթածարը չարժանացաւ արմատական լուծումի, այլ միշտ առկայութեամբ: Ան նկատել տուաւ, որ հարկ է բարեկարգութեան առնչուած մշակել ամբողջական ծրագրեր, իսկ անոնց գործադրութեան պարագային ըլլալ հետեւեղական:

● ՄԱՐՈՒՆԵՐՈՒՆ Երեսփոխան Պոլիքարոս Սֆէյր պատրիարք երէկ Տիմանի մէջ ընդունեց արտաքին գործոց եւ արտերկրի լիբանանցիներու հարցերու նախարար ժան Օպէյտը, որուն հետ քննարկեց ներքին անհանգստանքները քաղաքացիական պետութեան իրադարձութեանց առնչուած հարցեր եւ Լիբանանի սպառնացող շրջանային վտանգները: Սֆէյր պատրիարք շնչուց, որ քրիստոնեաները պէտք է հաստատման իրենց հաւատքին մէջ եւ համբարակութեամբ ապահով իսլամներուն հետ, ամբարշտելով խաղաղութիւնը ու գործակցութիւնը: Իր կարգին Օպէյտ յայտնեց, որ իսրայէլացիները կ'ուզեն տկարացնել ՄԱԿի ղեկավարութիւնը եւ ուժը, գրաւելու համար անոր դիրքը: Սֆէյր պատրիարք ընդունեց նաև երեսփոխան Պոլիքարոս շարքը:

● ՊԵՏԱԿԱՆ Նախարարներ Ասատ Տիպալ եւ Ասեմ Քանո Նախարար Պաալայթի Մարապան եւ Պրիթիլ զիւղաքաղաքներուն մէջ բացումը կատարեցին երկու դրամատուներու: Նշելով արտադրութեան ներկայ գտնուեցան երեսփոխաններ, քաղաքացիներ եւ բարձրաստիճան այլ անձնաւորութիւններ: Բացման արարողութեան ընթացքին շնչուցեցան, թէ Լիբանանի մէջ բարգաւաճումը հաւասարակշռուած է եւ շարունակական:

● ԳԱՂՉՈՒԿԱՆՆԵՐՈՒ Եւ գաղթականութեան հարցերու նախարար Ապտալա Ֆարաճի երէկ ընդունեց երեսփոխան Աքրամ Շրահայէլը, որուն հետ քննարկեց Ալէյի առնչուող հարցերու լիցիթմաբարձր: Ֆարաճի ընդունեց նաև երկրականութեան ընկերութեան պաշտօններու սենտիքային մէջ պատուիրակութիւնը, նախագահութեամբ Շարպէյ Սալէհի:

● ՇԻՆԵՐՈՒ Գերագոյն խորհուրդի փոխ նախագահ միւլաթի շէյխ Ապտալա Քապալան երէկ խոստովապատեց Համասի ղեկավարներէն Իսմայիլ Ապու Շանայի սպանութիւնը եւ շնչուց, որ Ապու Շանայի նախատեսութիւնը կ'իյնայ Իսրայէլի ներքին, սպանողի ու հանցակցական գործողութիւններու ծիրէն ներս եւ անցնուց, որ ճշեալ արարքը ոչ միայն կը խախտէ զինադրույթ, այլ կը նկատուի զինադրույթի խոչընդոտում:

● ՀԸՉՈՒԿԱՆՆԵՐՈՒ Եւ գաղթականութեան հարցերու նախարար Ապտալա Ֆարաճի երէկ ընդունեց նաև երկրականութեան ընկերութեան պաշտօններու սենտիքային մէջ պատուիրակութիւնը, նախագահութեամբ Շարպէյ Սալէհի:

Միւս կողմէ, ան ընդգծեց, որ Իսրայէլ եթէ երբեք յաղթէ պաղեստինեան ինքիփրատային ապա պատասխանատուներու մակարդակի վրայ արաբական կամ իսլամական ամէն արժանապատուութիւն կը չբնայ:

Նշեց, որ Հըրպալա երէկ հրապարակեց պաշտօնական հաղորդագրութիւն մը, որուն մէջ խոստի դատապարտեց իսրայէլեան ուժերու կողմէ պաղեստինցի, Համասի ղեկավար Իսմայիլ Ապու Շանայի սպանութիւնը, դիտել տալով, որ նշեալ ոճիրը կ'ապացուցէ, թէ խաղաղութեան գործընթացին մասին յայտարարութիւնները ցնորք են:

● ԱԶԳԱՅԻՆ Ազատականներու կուսակցութիւնը երէկ նախագահութեամբ Տորի Շամուելի գումարեց իր հերթական նիստը, որմէ ետք հրապարակեց հաղորդագրութիւն մը, նշելով, թէ կուսակցութիւնը երբեք հետաքրքրուած չէ Պաալայթ-Ալէյի երեսփոխանական մասնակի ընտրութիւններով:

ԱՐՑԱԽԻ ՕԺԱՆԴԱԿՈՒԹԵԱՆ ՖՈՆՏԻՆ

● Լիպոնի 20ամեակին առթիւ, ԼԵՄԻ Հայաստան եւ Շահէն Մեղրեան մասնաձեւերը ու Երայր Դոնիք եւ Գարեգին Նժդեհ պատանգեալ միութիւնները կը նուիրեն 70 հազար Լ. ո. Արցախի Օժանդակութեան Մարմինը:

Հ. Մ. Բ. Մ. ՊԵՐՈՒՅԻ ՄԱՍՆԱԾԻՂ
Հ. Մ. Բ. Մ. ՊԵՐՈՒՅԻ մասնաձեւի սկաւտական խորհուրդն ու խմբապետական կազմը ձեռք կը հրակրեն ներկայ գտնուելու մասնաձեւի տարեկան բանակումի պաշտօնական
ԽԱՐՈՒԿԱԸԱՆԴԵՍԻՆ
որ տեղի պիտի ունենայ Շաբաթ, 23 Օգոստոս 2003ին երեկոյեան ժամը 9:00ին, բանակավայրէն ներս, Պաալայթ:
ԵՆՈՑԻ: Դրոշակի պաշտօնական արարողութիւնը տեղի պիտի ունենայ երեկոյեան ժամը 7:00ին, իսկ բանակավայր այցելութիւնը արտօնուած է երեկոյեան ժամը 5:00էն սկսեալ:

«ՆԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՏԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՐԳԸ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՄԷՋ ԿԸ ԳՏՆՈՒԻ»

ԿԸ ՎՍԱԷՑՆԵ ԸԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ԱՆԽԱՐԱՐ ԴԱԽԻԹ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ՝ «ԱԶԳԱԿ»ԻՆ ՏՐՈՒԱԾ ՅԱՏՈՒԿ ԸՆԹԱՑՐՈՅՑԻ ՍԸ ԸՆԹԱՑՔԻՆ

ՀԱՐՑՈՒՄ. - Պարոն նախարար, առաջին հերթին, իբրև ծանոթացում, ինչ կրճարված էր ձեր մասին: Ո՞ր ամբողջացուցած էր ձեր ուսումնական, մասնագիտական ասպարեզը:

ՊԱՏԱՍՏԱՆ. - Ես ունիմ երեք տարբեր մասնագիտություններ: Հիմնական մասնագիտությունս համակարգիչներն են: Այս մասնագիտությունը ստրված եմ Երեւանի Փոլիթեխնիկ հիմնարկի մէջ: Այս ուսած եմ իրաւաբանություն՝ Ռուսիայի մէջ, եւ վերջին մասնագիտությունս մասնագիտությունն է: Այդ մէջ կը ամբողջացուցած եմ Երեւանի Մանկավարժական հիմնարկին մէջ:

Հ. - Լսած եմք, որ Երեւանի մէջ դեկավարած էր իւրաքանչիւր դպրոց մը: Ի՞նչ կրճարված էր այդ մասին:

Պ. - Ես Երեւանի մէջ դեկավարած եմ սովորական դպրոց մը, ուր կը կիրարկուէին ուսումնական նոր մեթոտներ, որոնք հօրս եւ իմ կողմէս մշակուած էին: Մենք այդ դպրոցին մէջ առիթ կ'ընծեանք, որ բնածին տաղանդ ունեցող մանուկներ իրենց տաղանդը բացայայտեն, եւ արդիւնքները շատ գոհացուցիչ էին:

Հ. - Արդարադատութեան նախարարութիւնը ստանձնեցիք այնպիսի ժամանակաշրջանի մը, երբ Հայաստանի համար շատ կարեւոր հարց մը մտաւարտութիւն վերացումը օրակարգի վրայ էր: Բոլորիս ծանօթ է, որ եւրոպական չափանիշներուն յարմարելու միտումով, եւ նաեւ՝ եւրոպական թելադրանքներով մենք մահապատիժը վերացուցինք: Գիտական, արդարադատական ինչ բացատրութիւն կրնաք տալ. այս գծով պէ՞տք էր մահապատիժը վերացնել եւ ինչու է:

Պ. - Նախ ըսեմ, որ անկախ մէջ ինչէ, մահապատիժը վերացումը վէճերը կան բոլոր երկիրներու մէջ: Չկայ երկիր մը, որ բացառութիւն կը կազմէ: Այդ վէճերը կան եւրոպական երկիրներու մէջ: Իրաւաբաններու մօտ այս մէջը տարածուած վէճ մըն է, որ երբեք չունի միանշանակ պատասխան: Սակայն եւրոպական երկիրները ի վերջոյ այդ ուղին ընտրած են՝ իրենց աւելի նպատակաւոր մար եւ առաւել ժողովրդավար միջոց: Հետեւաբար ես կը կարծեմ, որ իտեպական լուծումը չկայ այս գծով: Սակայն ալ հարցունքով մը պէտք է հարցնենք. ինչու՞ մահապատիժը կը կիրարկուի, ի՞նչ է անոր դրոպատաճառը: Կը կարծեմ, որ ան հիմն է կեանքը աւանդութիւն մըն է, սակայն ինծի համար ան միշտ եղած է անբնորոշելի պատիժ՝ մէկ կարեւոր պատճառով. ես չեմ կրնար պատկերացնել մարդ մը, որուն մասնագիտութիւնը դահիճ կը կոչուի: Անկախ եւրոպական խորհուրդի անդամակցութեան հարցնէ, ես միշտ եղած եմ ջատագուցիչ, որ մահապատիժը վերանայ եւ փոխարինուի ցմահ բանտարկութեամբ: Իսկ պատիժի ծանրութեան տեսակէտէն, ես կը կարծեմ, որ ցմահ բանտարկութիւնը մահապատիժէն նուազ ծանր պատիժ չէ: Կիրարկելը շատուց արդէն ցոյց տուած է, որ մահապատիժը գոյութիւնը ոչ մէկ ազդեցութիւն կ'ունենար ոճիրներու քանակին կամ որակին վրայ: Ես հինգ տարիէ աւելի Հայաստանի մէջ նախարար եմ եւ իմ կարծիքը արդէն արտայայտած եմ՝ անկախ Եւրոպական խորհուրդի անդամակցելու հարցէն:

Հ. - Մահապատիժի վերացումէն առաջ տրուած մահապատիժի որոշումները պիտի գործադրուի՞ն, թէ ցմահ բանտարկութեամբ պիտի փոխարինուի:

Պ. - Նախ ըսեմ, որ Հայաստանի մէջ երբեք չէ գործադրուած մահապատիժ: Այդ առումով Հայաստան ԱՊՀ-ի երկիրներուն մէջ յատուկ տեղ կը գրաւէ, որովհետեւ նոյնիսկ եթէ մէկ կողմ մը նկատմամբ մահապատիժի վիճի տրուէր, անձը կը փոխարինուէր Ռուսիա, ուր կը գործադրուէր պատիժը: Թէեւ անկախութենէն ետք մենք ունեցած ենք մահապատիժի դատապարտուած շարք մը անձեր, սակայն մահապատիժը երբեք չէ գործադրուած: 1 Օգոստոսին նախագահը հրամանագրով մը ներուժ չնորհեց մահապատիժի դատապարտուած յանցագործներուն եւ անոնց պատիժը փոխարինեց ցմահ բանտարկութեամբ: Միակ անձերը, որոնց վիճակը տակաւին յստակ չէ, անոնք են, որոնց վճիռը տակաւին արձակուած չէ, եւ որոնք յանցագործութիւնը գործած են 1 Օգոստոսէն առաջ, երբ տակաւին կը գործէր Հին քրէական օրէնսգիրքը: Միաժամանակ կ'ըզեմ նշել, որ Հայաստանի Ազգային Ժողովին մէջ արդէն կը քննարկուի մարդկային իրաւանց եւ ազատութիւններու վերաբերող եւրոպական համաձայնագիրը, որ իր մէջ կը պարունակէ նաեւ մահապատիժի վերացումը: Եթէ Հայաստանի Ազգային Ժողովը պատշաճ բերին վաւերացնէ այդ արձանագրութիւնը, փաստօրէն իրաւական գետնի վրայ մահ մահապատիժը ջնջուած կ'ըլլայ:

Հ. - Հայաստանի մէջ փտածութեան դեմ պայքարը հիմնական հարց մը դարձած է: Մահաւանդ քաղաքական որոշումներ, ինչպէս, օրինակ, Զ. Յ. Դաւենակցի, շատ կ'արժանանան այս հարցը: Հնչեցինք, որ փտածութեան դեմ պայքարի համար նախագահին կից պետական յատուկ մարմին մը պիտի ստեղծուի: Բնականաբար արդարադատութեան նախարարութիւնը իր ընդհանուր ունի փտածութեան դեմ պայքարին մէջ: Արդարադատական եւ օրենսդրական գետնի վրայ ինչպէս կարելի է պայքարել այս տեսանկյանի դեմ:

Պ. - Փտածութիւնը բաւական բարդ խնդիր է եւ տարբեր երկիրներու մէջ ունի արտայայտման տարբեր ձեւեր: Ես կ'ըզեմ ներկայացնել, թէ փտածութեան դեմ պայքարը գծով Հայաստանի մէջ ինչ ընկերները կան: Ես կը կարծեմ, որ փտածութիւնը բոլորովին չի վերանար, այլ կը փոխէ իր դէմքը եւ, հետեւաբար, անոր դէմ պայքարի միջոցները եւ կը փոխուի: Այսօր ես

չեմ կարծեր, որ պետական մարմինի մը ստեղծումը ինքննապատակ է, որովհետեւ մարմինը երբեք ինքնին փտածութեան դէմ պայքարին մէջ չէ կրցած յաջողութեան հասնիլ: Կան երկիրներ, որոնք նման մարմիններ ստեղծելով՝ այդ պայքարի ամբողջ գաղափարը վարկաբեկած են, որովհետեւ կամ մարմինը փտածութեան վարկուած է, կամ ալ յաջողութեան չէ հասած:

Հայաստանի համար փտածութեան դէմ պայքարը կ'ընդգրկէ բաւական բարդ միջոցառումներու ծրագիր մը, եւ ի հարկէ օրէնքն ու օրէնսդրութիւնը շատ կարեւոր դեր ունին այս գծով: Փտածութիւնը կը ծնի յաճախ այն պահուէն, երբ գործադիր կամ դատական իշխանութիւնը կարելիութիւն կ'ունենայ գործելու այս կամ այն ձեւով իւրաքանչիւր անձի հետ եւ պետական պաշտօնեային կամ քէն կախիկ կ'ըլլայ, թէ ինչ լուծում կը տրուի քաղաքային ներկայացուցած հարցին: Հետեւաբար փտածութիւնը կը ծնի, երբ օրէնսդրութիւնը յստակ չէ, եւ պետական պաշտօնեան կրնայ այս կամ այն, նպատակը կամ անպատաս լուծումը տալ քաղաքացիի հարցին: Ուրեմն որքան աւելի յստակ եւ պարզ ըլլան օրէնքները, որքան աւելի լաւ նկարագրուած ըլլան անոնք եւ հակասութիւններու առիթը չստան, այնքան աւելի տկար կ'ըլլայ փտածութեան հիմքը:

Այս առումով Հայաստան շատ բարդ իրավիճակի մը մէջ կը գտնուէր յատկապէս անխախտութենէն ետք, երբ իրենց անկախ երկիր՝ չունէր իր իրաւական կամ օրէնսդրական դաշտը, եւ խորհրդային Միութեան կողմէ ընդունուած շարք մը օրէնքներ մնացած էին իրենց ժառանգորդին: Բնականաբար Հայաստան չէր կրնար գերդիչ սկսիլ, հետեւաբար, սկսած կիրարկել այդ հին օրէնսդրական համակարգը՝ միաժամանակ ընդունելով նոր օրէնքներ: Դէպի շուկայական տնտեսութիւն Հայաստանի անցումը օրէնսդրական նոր արք մը հանդիսացաւ եւ իրենց օրէնքները գոյանա դաշտ մը, ուր կան բազմաթիւ իրարու հակասող օրէնքներ եւ կանավարական որոշումներ: Այս էր փտածութեան համար ամէնէն մեծ զարտը:

Վերջին հինգ տարիներուն ընթացքին մենք այս գծով շարք մը կարեւոր քայլերու ձեռնարկեցինք: Մենք վերտեսութեան ենթակայեցինք մեր իրաւական դաշտը եւ քանի մը տասնեակ հազար իրաւական արբեր անօտարարութեան նկատեցինք, որովհետեւ անոնք քառասուն վիճակ ստեղծած էին: Վստահաբար տակաւին մեծ աշխատանք ունինք կատարելիք, բայց պէտք է նաեւ ըսել, որ բաւական աշխատանք կատարած ենք արդէն՝ ցոյց տալով, որ ունինք թէ՛ կամք եւ թէ՛ կարողութիւն՝ այդ աշխատանքը կատարելու:

Դատական համակարգը եւս կայունած է փտածութեան հետ: Խորհրդային Միութենէն մենք ժառանգած էինք բաւական ծանր դատական համակարգ, այն առումով, որ դատարանը երբեք արդարադատութեան մարմին չէր, այլ՝ կուսակցութեան որոշումները գործադրողն էր: Մենք քայլ առ քայլ կը ստեղծենք դատական նոր համակարգ, որ իր հերթին բոլորովին գերծ չէ փտածութենէ: Կը կարծեմ, որ անցնող 10-12 տարիներուն ընթացքին մենք բաւական լուրջ աշխատանք տարած ենք այս գծով եւ ապագայի ծրագիրները եւս ունինք (թէ՛ գալիք հինգ տարիներուն համար եւ թէ՛ աւելի երկարաժամկէտ ծրագիրներ): Հետեւաբար կարելի է քայլ առ քայլ փտածութեան դէմ պայքարը ծաւալել:

Հ. - 27 Հոկտեմբերի հարցով դատական հովովոյքը ցարդ ո՞ր հասած է:

Պ. - Այսօր թէ՛ մը տարօրինակ իրավիճակի մէջ կը գտնուէինք, որովհետեւ մեղադրող կողմը վերտեսութեան ենթակայեց իր վկաներուն ցանկը: Գիտե՞ք արդէն, որ այդ յանցագործութիւնը իւրաքանչիւր է այն իմաստով, որ տնտեսողները իրենց շտապ էր եւ վկաններուն թիւը շատ աւելի մեծ էր: Բնականաբար առաջին փուլին փափաք կար, որ բոլորը ներկայանային դատարան, յատկապէս երբ կային տարբեր մեկնաբանութիւններ այն յանցագործութեան կապակցութեամբ, եւ կատաններ, որ վկաններուն եզրակացութիւնները կամ ցուցումները կրնան փոխել իրավիճակը՝ յաւելելով լուր սփռելով յանցագործութեան վրայ: Սակայն այսօր մեղադրող կողմը հարցաքննելի վկաններ թիւը՝ առաջարկելով կարգաքննել շատ աւելի փոքր քանակութեամբ մարդիկ՝ նկատելով, որ դատավարութեան ընթացքին այլեւս նոր պէ պիտի չըսուի: Տնօրոգներուն ներկայացուցիչները, սակայն, պահանջած են հարցաքննել բոլոր վկաններ, որոնք թիւը 100էն աւելի է: Վերջնական որոշումը փտահարար կը մնայ դատարանին, սակայն, ամրատաննաբանը կրնան պահանջել լրացուցիչ վկաններու հարցաքննութիւնը: Անոնց կարծիքը յստիչն ետք՝ դատարանը կու տայ իր վերջնական որոշումը: Այս պահուէն դատարանը մերժած է տնտեսող կողմի միջնորդութիւնը հարցաքննել բոլոր վկաններ՝ նկատելով, որ արդէն բաւական վկաններ հարցաքննուած են: Սակայն ամրատաննաբաններուն կարծիքը կրնայ իրավիճակը փոխել:

Հ. - Վերջին շրջանին Հայաստանի մէջ սկսած է մտահոգիչ դառնալ քաղաքական սպանութիւնները (ինչպէս օրինակ յրազրող Տիգրան Նաղդալեանի) հարցը: Այս իմաստով դատական իշխանութիւնները ինչ ձեւով կրնան



ազդել, որ այս յոռի երեւոյթը ոչ թէ միայն նուագագույնի իջնէ, այլ ամբողջովին վերանայ:

Պ. - Յաւոք սրտի շատ դժուար է յանցագործներու կամքը կառավարել: Յանցագործներու դէմ պայքարի ամէնէն արդիւնաւէտ միջոցը նախ յանցագործութեան հիմանը բացայայտումն ու պատիժի անխուսափելիութիւնն է: Այդ առումով կրնամ ըսել, որ Հայաստան շատ աշխուժ քայլերու ձեռնարկեց եւ քաղաքական սպանութիւնները փորձեց, ինչպէս նաեւ կը կարծեմ, յաջողեցաւ բացայայտել: Վստահաբար վերջին խօսքը կը մնայ դատարանին: Դատարանը պէտք է ըլլայ այն հակակշիռը, որ առիթը շատ կասկածներու հիման վրայ մարդիկ դատապարտելու: Միաժամանակ դատարանը պէտք է վճիռ կայացնէ եւ յանցագործներուն համապատասխան պատիժով դատապարտէ: Այս առումով Տիգրան Նաղդալեանի պարագային շատ կարեւոր քայլ արձանագրուեցաւ, որովհետեւ յանցագործները բացայայտուած են եւ դատավարութիւնը արդէն սկսած է: Կը կարծեմ, որ քաղաքական սպանութիւններու դէմ պայքարելու աւելի ազդու միջոցներ գոյութիւն չունին: Այս առումով Հայաստան լաւ դիրքի վրայ կը գտնուի՝ համեմատաբար իր զբաղի երկիրներուն եւ նաեւ աշխարհի այլ երկիրներուն հետ, ուր քաղաքական սպանութիւնները շատ աւելի հազարապէս կը բացայայտուին: Իսկ քաղաքական սպանութիւնները, ցաւօք սրտի, կ'ընկերակցին քաղաքական կեանքին:

Հ. - Բազմիցս խօսուեցաւ Հայաստանի մէջ ընտրական նոր օրէքի մշակելու մասին: Արդե՞ս այդ մէկը պիտի կատարուի:

Պ. - Ես կը կարծեմ, որ կամ ընտրական նոր օրէնք պէտք է մշակուի, կամ ալ առկայ օրէնքը արմատապէս բարեփոխուի, սրովհետեւ այս ընտրութիւնները ցոյց տուին, որ օրէնքը ունի բաւական ներքին հակասութիւններ, որոնք իրենց կարգին պատճառ կը դառնան որոշ խախտումներու: Նոր օրէնսգիրքի մշակման կամ առկայ օրէնսգիրքի փոփոխութեան աշխատանքները արդէն սկսած է: Ազգային ժողովն ու կառավարութիւնը հաւանաբար առանձնաբար աշխատանք տանին այս գծով: Սակայն թերեւ ամէնէն կարեւոր հարցը այս իմաստով ընտրական յանձնաժողովներու ձեւաւորումն է: Արդէն քանի մը անգամ մենք նման փորձառութիւն ունեցած ենք եւ ան ցոյց տուած է, որ կուսակցական սկզբունքով ձեւաւորուած յանձնաժողովները դժբախտաբար չեն արդարացներ իրենց գիրքին: Անոնք չեն կրնար ասահուցել գործընթացին առարկայականութիւնը, որովհետեւ իւրաքանչիւր անձ շատ անձնական կը մօտենայ ընտրութիւններուն: Ան կը պաշտպանէ որոշ կուսակցութեան մը շահերը եւ չի ձգտիր հանդիլ այն արդիւնքին, ուր ժողովուրդին կարծիքը կ'արտայայտուի: Այս առումով շատ աւելի նպատակաւոր մար կ'ըլլայ օգտագործել քաղաքացիական ծառայութիւններու տեժերը: Վստահ եմ, որ ընտրական օրէնսդրութեան բարեփոխումները այդ ուղղութեամբ պիտի ընթանան: Ընդհանուր առումով կը կարծեմ, որ Հայաստանի մէջ իւրաքանչիւր ընտրութիւն աւելի լաւ կ'անցնի, քան՝ նախորդը, եւ կ'ուզեմ, որ ունէ մէկը չմտնայ որ ընդամենը 12-13 տարի առաջ մենք ունէինք տարիներու ընտրութիւններու փորձառութիւն, երբ ընտրութիւնները կը մասնակցէր ժողովուրդին 99,9 առ հարիւրը, որոնցմէ 99,8 առ հարիւր իր ձայնը կու տար միակ առկայ թեկնածուին: Հետեւաբար մենք ունեցած ենք 70 տարուան բացարձակ ոչ առարկայական ընտրութիւններ եւ շատ դժուար է մէկ անգամէն անցում կատարել: Անշուշտ այդ մէկը չի նշանակեր, որ անցումը պէտք չէ կատարուի: Բաւական ըրող աշխատանք մենք արդէն կատարած ենք եւ նոր փուլը արդէն կը հաստանանայ: Կարճ ժամանակի մասին ես անընդհատ կը խօսիմ, ո՞չ թէ որովհետեւ ան թերութիւններու արդարացուցիչ պատճառ է, այլ որովհետեւ տարբեր ոլորտներ եւս պէտք է բարեփոխուին՝ պէտք եղած արդիւնքը ստանալու համար:

Հ. - Հայաստան տակաւին նորանկախ երկիր է եւ, բնականաբար, 12 տարուան մէջ կարելի չէ ամէն ինչ վերականգնել: Այդ մէջը ժամանակի կը կարծուի: Յարաբարաբար նորանկախ այլ պետութիւններու հետ (ինչպէս օրինակ կողակաւեան կամ պալքեան որոշ երկիրներ), Հայաստան գարգացում հնչն ընթացքին վրայ կը գտնուի:

Պ. - Ես կը կարծեմ, որ մենք պայթեան երկիրներէն ենք, որովհետեւ պայթեան երկիրներու խորհրդային տարիները չէին վերացուցած այդ երկիրներու նախախորհրդային սերունդը, որ պիտէր, թէ ինչ կը նշանակէ ժողովրդավար

երկիր, ժողովրդավար ընտրութիւններ, շուկայական տնտեսութիւն եւ մասնաւոր սեփականութիւն: Այդ սերունդը չէր վերացած, որովհետեւ պայթեան երկիրներուն մէջ խորհրդային տարիները շատ կարճատեւ էին: Ի տարբերութիւն այդ երկիրներուն, մենք բոլորովին կորսնցուցինք այն սերունդը, որ գիտէր այդ բոլորին նշանակութիւնը: Հայաստանի առաջին Հանրապետութեան սերունդը չկար ալլելու: Մենք, ինչպէս Անդրկովկասի կամ յետխորհրդային այլ երկիրներ, գերոյն սկսանք ամէն ինչ:

Չարգացման ընթացքի իմաստով ես կը կարծեմ, որ Հայաստան լաւ ընթացքի մէջ է, սակայն չեմ ուզեր ինքնագովութեամբ զբաղիլ, որովհետեւ մենք տակաւին շատ հեռու ենք մեր վերջնական նպատակէն եւ իրաւունք չունինք հանգստանալու եւ մենք մեզ գովելու: Հետեւաբար, թէեւ համեմատական առումով մեր արդիւնքները լաւ են, մենք դեռ շատ ընեւիք ունինք:

Հ. - Նախագահական ընտրութիւններէն ետք ընդդիմութիւնը դիմեց Սահմանադրական դատարան, որ իր կարգին ժողովուրդին առիթը տուաւ հանրաքուէի միջոցով ընտրութիւններուն նկատմամբ իր վստահութեան քուէն տալու: Այս հարցումը մասին ինչ է ձեր կարծիքը իբրեւ նախարար:

Պ. - Ես կը կարծեմ, որ Սահմանադրական դատարանը տուած բացարձակապէս անընդունելի ձեւաւորում մը, որ իր իրաւասութիւններէն դուրս է: Սահմանադրական դատարանը պէտք է պատասխանէր միայն մէկ հարցի. ընտրութիւնները վաւերական են, թէ ոչ: Ան արդէն տուաւ այդ հարցումին պատասխանը. ընտրութիւնները վաւերական են: Քաղաքական, վստահութեան քուէները, հանրաքուէները, քաղաքական հարցեր են, եւ Սահմանադրական դատարանը իրաւունք չունի այդ գծով որոշում տալու: Դատական իշխանութենէն քաղաքական հարցերու լուրջ առաջարկութիւն ստանալով ընդունելի չէ:

Ինչ կը վերաբերի վստահութեան քուէին, իբրեւ երեւոյթ, ես դէմ եմ նման ձեւակերպումի, որովհետեւ ժողովրդավար երկիրներու մէջ քաղաքական գործընթացներուն հանդէպ վստահութեան քուէն կ'արտայայտուի ընտրութիւններու միջոցով: Իսկ վստահութեան քուէն իրենց իշխանութեան ձեւաւորման միջոց՝ կը գործածուի ամբողջատիակաւ երկիրներուն մէջ:

Հ. - Այսօր մենք նախանձով կը դիտենք բարգաւաճ երկիրներու դատական մարգերը: Հայաստան տակաւին որքա՞ն ժամանակի կը կարծուի իր դատական համակարգը բարեփոխելու եւ ընդունելի մակարդակի հասցնելու: Այս իմաստով եւրոպական երկիրներու, Միացեալ Նահանգներու եւ այլ քաղաքացած երկիրներու հետ ձեր նախարարութեան կամ Հայաստանի օրէնսդրական մարմիններու կապերը ինչպիսիս են: Բարգաւաճ երկիրներու դատական համակարգերուն հետ փոխադարձ գործակցութիւն կա՞յ:

Պ. - Նախ պէտք է ըսեմ, որ եթէ մենք փորձենք առնել որեւէ եւրոպական զարգացած երկիր մը օրէնքները եւ զանոնք կիրարկել Հայաստանի մէջ, չենք յաջողիր, որովհետեւ մենք այլ իրականութեան մէջ կը գտնուինք: Չունինք ձեւաւորուած աւանդույթ, որ դատական համակարգին համար շատ կարեւոր է: Ուրեմն մեր նպատակը առաջին հերթին զարգացած երկրի մը օրէնքները Հայաստանի մէջ կիրարկել չէ, այլ՝ ձեւաւորել համապատասխան աւանդույթ: Այս ձեւով համակարգը կրնայ գոյատեւել ինչն իր մէջ ունենալով իր զսպումներն ու հակակշիռները, ինչ որ շատ կարեւոր է եւ առանց անոր մենք ձախողութեան դատապարտուած կ'ըլլանք: Եթէ մենք կ'ուզենք արագ անցնիլ այս ժամանակաշրջանը, մեզի պէտք են բազմաթիւ եւ արագ փոփոխութիւններ: Չորս տարի առաջ մենք սկսանք մեր դատական բարեփոխումներու առաջին փուլը եւ ձեւաւորեցինք նոր տիպի գատական համակարգ՝ եռաստիճան դատական համակարգ, որուն մէջ յատկացան իւրաքանչիւր ատենին ինդիւնները: Կը կարծեմ, որ այս չորս տարիներուն արդիւնքը գէշ չեղաւ. մենք լուրջ քայլեր առինք, սակայն արդէն ժամանակ հասած է սկսելու արեւելափոխումներու երկրորդ փուլը: Կան երկիրներ, որոնք կ'ընդունին դատական օրէնսգիրքեր եւ տասնեակ տարիներ շարունակ գաղտնի փոփոխութեան չեն ենթարկուել: Իսկ մենք տակաւին չորս տարի առաջ ընդունեցինք նոր դատական օրէնսգիրքեր եւ այսօր կը նկատենք, որ անոնք արդէն հիացած են, եւ կը խօսին

ՏԵՂԵԿԱՏՈՒԱԿԱՆ ԱՐՆԵՍՏԱԳԻՏՈՒԹԻՒՆ


ՀԱՄԱԿԱՐԳԻԾ

ՀԱՄԱՑԱՆՑ

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԱՇԽԱՐՀ



ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԽԱՂԵՐՈՒ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԿԱՅՔԸ




Յրդ Համահայկական խաղերու մասին տեղեկութիւններ ստանալու, ինչպէս նաեւ նախորդ խաղերուն մասին կարողաւու համար կարելի է այցելել Համահայկական խաղերու կազմակերպիչ մարմինին պաշտօնական կայքը՝ www.panarmeniangames.am:

Կայքը կ'ընդգրկէ առանձին բաժիններ՝ առաջին, երկրորդ եւ երրորդ խաղերուն յատկացուած: Իւրաքանչիւրին մէջ մանրամասն տեղեկութիւններ տրամադրուած են տարբեր մարզաձեւերու մէջ արձանագրուած արդիւնքներուն, մասնակցող պատուիրակութիւններուն եւ խաղերուն ընթացքին մասին:

Կայքին մէջ բաժիններ յատկացուած են նաեւ կազմակերպիչ կոմիտէի նիստերուն, խաղերու պատմական եւ հովանաւորողներուն:

ԲԱՌԱՐԱՆ



Ստորեւ, եւ մեր յաջորդ թիւերով, բացատրութիւններ պիտի ներկայացնենք տեղեկատուական արհեստագիտութեան մէջ յաճախ օգտագործուող բառերու մասին: Բառեր եւ կրճատումներ, որոնց կը համոզուինք համակարգիչ մը գնելու ընթացքին, տեղեկատուական արհեստագիտութեան մասին լուրեր եւ յայտագիրներ դիտելու պահուն կամ գրոյցի առնել:

● «Է.Թ.Փ.Փ.» (FTP) - Անգլերէն «Յայլ թրէնսֆեր փրոթոկոլ» եզրին կրճատուած: «Է.Թ.Փ.Փ.» համակարգչային «լեզու» մըն է, որ առիթ կ'ընձեռէ համացանցի սերվերներու եւ համակարգիչներու միջեւ ֆայլեր փոխանակելու: UNIX համակարգչային լեզուն վրայ հիմնուած այս դրոթիւնը պատրաստուած է 1985ին:

● UNIX - Ժողովրդականութիւն վայելող օփերէյթինկ սիսթեմ մը, որ թէեւ այնքան տարածուած չէ, որքան «Ուինտոզ»ը, սակայն իր առաւելութիւններուն շնորհիւ նախընտրելի դրոթիւնն է համակարգչագէտներուն: Համակարգչային Սի. լեզուն վրայ կառուած այս դրոթիւնը աշխատանքային ցանցեր եւ սերվերներ վարող ամէնէն ժողովրդական դրոթիւնն է: UNIX պատրաստուած է 1970ական թուականներուն, «Պէլ լապպ»ի մէջ:

● ՍԵՐՎԵՐ (server) - համակարգչային սարքը, որ միացուած է համակարգիչներու ցանցի մը (կամ համացանցին) եւ կը տնօրինէ այդ ցանցին աշխատանքները: Այսպէս, օրինակ՝ աշխատավայրի մը մէջ կարելի է գտնել «Փրինթ սերվեր» մը, որ բոլոր պաշտօնէաներուն համակարգիչներէն տպագրութեան հրահանգները կը դասաւորէ եւ կ'ուղարկէ տպիչին (փրինթըր): Համացանցի սերվերը, իր կարգին, համացանցին կայքեր կ'ամբարէ եւ «պրաուզըր»ներու կ'ապահովէ այդ կայքերուն հասողութիւնը:

«Ա.Զ.Գ.Ա.Կ»-ի ՀԵՌԱԶԱՅՆԻ ԹԻԻԵՐԸ
«Ա.Զ.Գ.Ա.Կ»-ի հետ կապուելու համար հեռաձայնել հետեւեալ թիւերուն.- 258526, 260115 եւ 241274:

ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԺԱՐԵՐՈՒ ՏԱՐԱԾ «ՍՈՊԻԿ» ԺԱՀՐԸ՝ ՄՐՑԱՆՇԱԿԻՐ

Հազիւ «Պլէսթըր» ժահրի ստեղծած աղմուկը հանդարտած, համակարգչային նոր ժահր մը, շատ աւելի հզօր, կը սպառնայ դառնալ պատմութեան ամէնէն արագ տարածող վնասարար քաղ:

Արդարեւ, «Սոպիկ» ժահրը կը տարածուի, երբ համակարգիչը օգտագործող «միամիտ»ներ իրենց ե-նամակատուին ուղարկուած «thank you», «Re:Details» կամ «Re:approved» խորագիրով ե-նամակներուն կցուած ֆայլը կը բանան:

Անմիջապէս որ այդ ֆայլը բացուի, «Սոպիկ» ժահրը, «գոհ» համակարգիչին մէջ ե-նամակի հասցէներ կը փնտռէ: Տրուած ըլլալով, որ համակարգիչներուն մէջ սովորաբար ամբարտուած կ'ըլլան բազմատասնեակ ե-նամակի հասցէներ, «Սոպիկ» գտած կ'ըլլայ «գոհ»երու ամբողջովին նոր բանակ մը, եւ ինքզինք կ'ուղարկէ այդ հասցէներուն:


22 Օգոստոսին «Մեքսիկո»-ի հրատարակած մէկ տեղեկագիրին համաձայն, նախորդող օրը ուղարկուած իւրաքանչիւր 17 ե-նամակներէն մէկը վտարակուած է «Սոպիկ» ժահրով: Ժահրերու տարածման սկիստ 10 օր առաջ, երբ «Պլէսթըր» կամ «Լաւ սան» անունով ճանչցուող թէ «Սոպիկ» ժահրը չըլլալու նաուութեան մէջ դրուած ե-նամակներու թիւը 60 առ հարիւրով կրնայ բարձրացնել՝ դանդաղեցրնելով համացանցը: «Սոպիկ» աննախընթաց



երեւոյթ է պատմութեան մէջ, առաջին օրուան ընթացքին աւելի քան մէկ միլիոն համակարգիչ վտարակուած է», ըսաւ ան՝ աւելցնելով. «Ասիական սարսափազդու թիւ է՝ նկատի առնելով, որ ժահրին յաջորդ տարբերակը կրնայ առաւել աւելի ըլլալ»: Ժահրերու տարածման սկիստ 10 օր առաջ, երբ «Պլէսթըր» կամ «Լաւ սան» անունով ճանչցուող թէ «Սոպիկ» ժահրը չըլլալու նաուութեան մէջ դրուած ե-նամակներու թիւը 60 առ հարիւրով կրնայ բարձրացնել՝ դանդաղեցրնելով համացանցը: «Սոպիկ» աննախընթաց

հրատարակ իջան երկու նոր ժահրեր՝ «Ուէլիա» եւ «Նաչի», որոնք իրենց թէ համակարգիչներ կը պաշտպանեն... «Պլէսթըր»ի դէմ, սակայն խորքին մէջ այդ մէկը պարզապէս կը ծառայէր «գոհ»եր համոզելու, որ պէտք է անոնք բանան ե-նամակին կցուած ֆայլը... «Նաչի»-ի գոհերուն շարքին էին քանատական օգանակային «Air Canada» ընկերութիւնը, ինչպէս նաեւ Միացեալ Նահանգներու Ծովուծի համակարգչային ցանցը: Եւ ապա «Սոպիկ»ը... «Զգո՛ւշ քայլիւր համացանցում»:

ՀԱՐՑՈՒՄ



Ի՞նչպէս կրնամ դիտնալ, թէ համակարգիչս «Պլէսթըր» ժահրով վտարակուած է, եւ ի՞նչպէս կրնամ ձեռքազատիլ անկէ: «Պլէսթըր» ժահրը կը վարակէ «Ուինտոզ ԷՆ. Թի. 4.0», «Ուինտոզ 2000», «Ուինտոզ Էքս. Փի.», «Ուինտոզ Սըրվըր 2003» դրոթիւնները: Ձեր համակարգիչին վարակուած ըլլալը բացառուած չէ: «ALT Control» կոնակները սեղմելէ ետք պարզուող Task Manager տուփիկին մէջ ընտրել processes եւ ապա ցանկին մէջ փնտնել «msblast.exe» կամ «w32.Blasters.worm» ֆայլերը: Այս անուններէն մէկուն հանդիպելու պարագային լիք ընել անոր վրայ եւ ապա ընտրել «end process»: Այս գործողութիւնը կատարած անէն պէտք է համակարգիչը համացանցին կապուած չըլլայ: «Մաքրութեամբ» ընկերութիւնը ժահրէն ձեր բազմաթիւ միջոցներ կը ներկայացնէ www.microsoft.com/security/incident/

blast.asp հասցեով կայքին մէջ, ուրկէ կարելի է նաեւ «Ուինտոզ»ը աւելի ապահով դարձնող ֆայլ մը արձանագրել: Ժահրին մասին տեղեկութիւններ կարելի է գտնել նաեւ «Քաուըրկի մեյլըն սոֆթուէր Էնթրեյնթմենթ Ինսթիթյու»-ի կայքին մէջ՝ www.cert.org/tech-tips/w32-blast.html

ԾԱՆՈՒՅՈՂՆԵՐՈՒ ՌԻՇԱԳՐՈՒԹԵԱՆ
«Ազդակ»ի մէջ ազգային կամ առևտրական ծանուցումներ հրատարակել փափաքողներէ կը խնդրուի ծանուցումին բնագիրը ընթերցելի գիրով (հաստատութեան պարագային՝ նախընտրաբար պաշտօնական թուղթի վրայ, եւ՝ հաստատուած) ներկայացնել «Ազդակ»-ի ծանուցումներու գրասենակը:

ԱՐՆԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒԹԻՆԵՐ ՎԻՏԵՕ-ԽԱՂԵՐՈՒ ՅԱՏՈՒԿ ՀԱՄԱԿԱՐԳԻԾ



